

# **«Հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքներ**

## **ՆԱԽԱԳԻԾ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **Օ Ր Ե Ն Թ Ը**

#### **«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 7-րդ մասում «մնացած գույքի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև կրթական, գիտական, մշակութային և սպորտային ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կողմից չօգտագործվող գույքի՝ հիմնադրի որոշմամբ հաստատված կարգով» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» ենթակետի «:» վերջակետ կետադրական նշանը փոխարինել «,» ստորակետ կետադրական նշանով:

**Հոդված 3.** Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ «թ» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«թ) կրթական, գիտական, մշակութային և սպորտային ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կողմից չօգտագործվող գույքը հետ վեցնելու և սեփականության իրավունքով այլ պետական կազմակերպությանը տրամադրելու կարգի հաստատումը:»:

**Հոդված 4.** Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» ենթակետի «:» վերջակետ կետադրական նշանը փոխարինել «,» ստորակետ կետադրական նշանով:

**Հոդված 5.** Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ «թ» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«թ) հիմնադրի կողմից հաստատված կարգով կրթական, գիտական, մշակութային և սպորտային ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կողմից չօգտագործվող և հետ վերցվող գույքի և սեփականության իրավունքով այլ պետական կազմակերպությանը տրամադրվող գույքի ցանկերի հաստատումը:»:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## **ՆԱԽԱԳԻԾ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **Օ Ր Ե Ն Զ Ը**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԸՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի ho-165-Ն հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել նոր՝ երկրորդ նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում կրթական, գիտական, մշակութային և սպորտային ծրագրեր իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպություններին ակտիվների տրամադրման անհատույց գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան համարվում է 0 դրամ:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: